ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

25 սեպտեմբերի հինգշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

129
(3160)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ԵՎ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ ՆՎԵՐՆԵՐ ԵՆ ՏՎԵԼ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի՝ պետական պատվիրակությունների այցերից ստացած նվերները հերթով հայտնվել են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ռեեստրում:

Ի՞նչ նվերներ են ստացել Նիկոլ Փաշինյանը եւ Արարատ Միրզոյանը, ո՞ւմ կողմից եւ որքա՞ն արժեն դրանք

Վարչապետը Պեկին մեկնելուց հետո նվերներով է վերադարձել: Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի նախագահ Լիցզյուն Ծինը Փաշինյանին նվիրել է դեկորատիվ համայնապատկերային նկար՝ կատարված ոսկեգույն ֆոնի վրա:

Նվերն արժեցել է 428 հազար 624 ՀՀ դրամ:

Նիկոլ Փաշինյանը Ալմաթի այցից հետո եւս առանց նվերի չի մնացել, եւ այն ոչ պակաս թանկարժեք է եղել:

Փաշինյանին նվիրել են նկար՝ «Սպիտակ յուրատ լեռներում» վերնագրով, նկարիչ Նադիր Բաբամուրատովի հեղինակմամբ: Այն արժեցել է 365 հազար 826 ՀՀ դրամ:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի հատուկ ներկայացուցիչ Սերդար Քըլըչը սեպտեմբերի 12-ին Հայաստանում էր: Նա արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի համար նվեր էր բերել: Թուրք գործընկերը Միրզոյանին նվիրել է զարդանախշերով ապակե թաս, որն արժեցել է 73 հազար 473 հազար ՀՀ դրամ:

Հիշեցնենք, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողներին, եթե որեւէ նվեր է տրվում իրենց պաշտոնական (ծառայողական) պարտականությունների իրականացմանն առնչվող, ապա անկախ դրա չափից, գնից, եթե անգամ այն արժե 100 դրամ, չեն կարող ընդունել:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:



Սեպտեմբերի 26-ին Ազգային ժողովում նախատեսվում են խորհրդարանական լսումներ իմպիչմենտի վերաբերյալ: Նախաձեռնությունը ներկայացրել է ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցությունը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ լսումներին հրավիրված են տարբեր քաղաքական ուժերի առաջնորդներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ եւ գործիչներ: Նրանք հնարավորություն կունենան հանդես գալու ելույթներով՝ ներկայացնելով իրենց դիրքորոշումները գործող իշխանության եւ իմպիչմենտի վերաբերյալ: Միեւնույն ժամանակ խորհրդարանի շենքի առջեւ ակնկալվում է հանրահավաք: Ինչպես հայտնի դարձավ մեզ, հանրահավաքը կազմակերպել է հասարակական գործիչ Էդգար Ղազարյանը: Միջոցառումը կկայանա ԱԺ-ի Բաղրամյան-Դեմիրճյան մուտքերի մոտ, որից հետո նախատեսվում է երթ: Այս զարգացումները վկայում են, որ քաղաքական դաշտում լարվածությունը չի թուլանում: Իմպիչմենտի թեման, որը վերջին ամիսներին ակտիվորեն շրջանառվում է ընդդիմության շրջանակներում, հասել է նոր փուլ: Ակնհայտ է՝ թե՛ խորհրդարանի դահլիճում, թե՛ փողոցում հնչելու են ծանրակշիռ գնահատականներ եւ սուր քննադատություններ:

Փետրվարի 5-ին Մերձավանում հնչած կրակոցները դարձան այս տարվա ամենասարսափելի դեպքերից մեկը: Այդ օրը սպանվեց համայնքի այն ժամանակվա ղեկավար, ՔՊ-ական Միհր Աղթոյանի հորաքրոջ որդին՝ 29-ամյա Գրիգոր Օհանյանը: Դեպքից հետո մեղադրյալի աթոռին հայտնվեցին 14 անձինք: Նրանցից միայն մեկին՝ Արմեն Ղազարյանին, ով ավելի հայտնի է «Ֆազ» մականվամբ, կալանավորեցին: Մյուսները, չնայած ծանր մեղադրանքներին, մնացին ազատության մեջ: «Ժողովուրդ»-ի խմբագրություն էր այցելել Արմեն Ղազարյանի մայրը՝ Ռուզաննա Ղազարյանը: Նա վստահեցնում էր՝ արդարությունը խեղաթյուրվում է, իսկ իրական մեղավորները մնում են ստվերում. «Ես անուններ կտամ .... Մարդկանց փորձում են ազատել սպանության պատասխանատվությունից, բայց իմ որդուն են պահում կալանքի տակ», - «Ժողովուրդ» օրաթերթի գրասենյակում հայտարարել էր Ռուզաննա Ղազարյանը: Սակայն նրա խոսքը մնաց անարձագանք: Փոխարենը ձերբակալվեցին Վալոդյա Գրիգորյանի կողմնակիցները: Գրիգորյանը հայտնի էր ընդդիմադիր դիրքորոշմամբ եւ պայքարում էր գործող իշխանության՝ ՔՊ-ի թեկնածուի դեմ: Այս զարգացումները, ըստ տեղի բնակիչների, ոչ միայն չլուծեցին առկա լարվածությունը, այլեւ նոր բռնկումներ հրահրեցին: Արդյունքում, Մերձավանում կրկին կրակոցներ հնչեցին: Այս անգամ եղավ երկու զոհ եւ մեկ վիրավոր: Այս իրադարձությունները կարմիր գծով մատնանշում են պետության հիմնական խնդիրը՝ իշխանության պատասխանատվությունը: Եթե իրավապահ համակարգը ժամանակին ամբողջությամբ բացահայտեր եւ կանխարգելեր սպանությունը, ապա նոր արյուն չէր թափվի: Այսօր Մերձավանի ողբերգությունները ոչ միայն իրավական, այլեւ քաղաքական հարց են: Մարդիկ պարզ ասում են՝ սպանությունների եւ անպատժելիության այս շղթան Նիկոլ Փաշինյանի իշխանության խղճի վրա է: Քանի դեռ իշխանությունն իր պատասխանատվությունը չի գիտակցում եւ չի ապահովում արդար դատաքննություն, հասարակությունը կմնա անվստահ եւ վտանգի առաջ: Մերձավանի պատմությունը պետք է դառնա դաս. ոչ թե քաղաքական հաշիվներ մաքրելու, այլ ճշմարտություն բացահայտելու ճանապարհ:



Սեպտեմբերի 24-ին Երեւանի Մատենադարանի նոր մասնաշենքում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ծննդյան 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով: Միջոցառմանը ներկա էր նաեւ ինքը՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Գիտաժողովին զուգահեռ Մատենադարանում բացվեց ցուցահանդես, որն անդրադառնում էր Առաջին նախագահի քաղաքական եւ գիտական գործունեությանը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ցուցահանդեսում ներկայացված էին Տեր-Պետրոսյանի հանդիպումների լուսանկարներ, իր ստորագրությամբ փաստաթղթեր, ինչպես նաեւ նրա քաղաքական ու գիտական գործունեության վերաբերյալ գրքեր եւ վավերագրական նյութեր: ՀՀ առաջին նախագահը գիտաժողովին նաեւ լրագրողների հարցերին պատասխանեց, որի ժամանակ մասնավորապես նշեց, որ 2008 թվականի մարտի 1-ին իր կողքին Նիկոլ Փաշինյանից բացի շատերը կային, եւ ինքը երբեւէ չի հայտարարել, որ Նիկոլ Փաշինյանը իր հոգեզավակն է: Հիշեցնենք՝ այս տարվա հունվարի 9-ին Լեւոն Տեր-Պետրոսյանը դարձավ 80 տարեկան:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԳԵՑՐԵՑ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ

«ՎԱԼՈՂՅԱՆ ՀԱՄԵՍՏՈՒԹՅԱՆ ՏԻՊԱՐ ԷՐ», ԹԱՆԴԻԼՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթը երեկ գտնվում էր Փարաքար համայնքում:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 23-ի գիշերը (կեսգիշերին մոտ) ահազանգ էր ստացվել, որ Արմավիրի մարզի Մերձավան բնակավայրի Երեւանյան խճուղում կրակոցներ են հնչել: Դրա հետեւանքով զոհվել էին Փարաքարի համայնքապետ Վալոդյա Գրիգորյանը եւ նրա ընկերը:

Տեղում «Ժողովուրդ»-ը զրուցել է «Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր Մանե Թանդիլյանի հետ:

-Տիկին Թանդիլյան, ի՞նչ գնահատական կտաք այս ողբերգական դեպքի վերաբերյալ: Կարելի՞ է սա դիտարկել որպես վենդետա՝ կապելով այն յոթ ամիս առաջ Մերձավանում ստեղծված լարված մթնոլորտի հետ, ինչպես նաեւ Վալոդյա Գրիգորյանի համոզիչ հաղթանակի հետ, երբ Փարաքարի համայնքապետի ընտրություններում նա ընտրվեց համայնքապետ: Ըստ էության, կրքերը Փարաքարում կարծես թե չեն հանդարտվել:

-Նման տեղեկությունների հաստատումը կամ հերքումը իրավապահների գործն է: Բայց մեկ բան հստակ է. հասարակության մեջ ապօրինի զենքի ահռելի քանակ կա, մինչդեռ իշխանությունները զբաղված են իրենց անպատասխանատու գործերով՝ հոգալով սեփական անվտանգությունը, իսկ հանցագործներին թողնելով ազատության մեջ: Փոխարենը՝ կազմակերպում են «ֆեյք» դատավարություններ ու մարդկանց անհիմն ձերբակալում: Սա ապացույց է, որ իրենք իրենց տեղում չեն: Եթե այս սպանությունը չբացահայտվեց, նրանք երկար ժամանակ պետք է պատասխան կտան:

Վալոդյա Գրիգորյանի ընտանիքը համեստ ու ազնիվ ընտանիք է, եւ ոչ ոք նրանցից չէր արժանի նման դժբախտության: Վալոդյան ինքը համեստության տիպար էր, մեր լավ ընկերն էր: Այն, ինչ կատարվեց նրա հետ, չի ներվելու: Իշխանությունները պարտավոր են բացահայտել հանցագործությունը եւ ցույց տալ, որ իսկապես փնտրում են իրական մեղավորներին, ոչ թե կատարում քաղաքական պատվերներ:

-Տիկին Թանդիլյան, ընտրություններից հետո կապի մեջ եղե՞լ եք պարոն Գրիգորյանի հետ: Նա երբեւէ մտահոգություն կամ անհանգստություն հայտնե՞լ է, որ փորձ է արվում իր նկատմամբ վենդետա իրականացնելու. քանի որ դեռ յոթ ամիս առաջ նույնպես կրակոցներ հնչեցին, սակայն իրավապահների տեսադաշտում հայտնվեցին միայն Գրիգորյանի կողմնակիցները, մինչդեռ իշխանության ներկայացուցիչներից ոչ մեկը չկասկածվեց: Մենք հետեւել ենք ամբողջ քրեական վարույթին, եւ բազմաթիվ ահազանգեր կային, որ արդար քննություն չի իրականացվում: Ինչո՞ւ պետք է ընդդիմադիր կողմի մարդիկ հայտնվեն մեղադրյալի աթոռին, իսկ իշխանական թիմակիցները մնան անպատասխան:

-Սա հետեւանք է անարդարության: Երբ ոստիկանությունը չի կատարում իր գործառույթները եւ արդարադատությունը չի գործում, նման ողբերգություններ են լինում: Վալոդյայի հետ զոհվել է նաեւ նրա ոստիկան ընկերը, այսինքն՝ ոստիկաններն անգամ ի վիճակի չեն հասկանալու, թե ինչ է կատարվում:

Ինչ վերաբերում է ընտրություններից հետո մեր կապին, ապա, այո՛, մենք կապի մեջ եղել ենք: Վալոդյան ամբողջովին կենտրոնացած էր Փարաքարի զարգացման վրա եւ զբաղված էր բացառապես համայնքային խնդիրներով:

Ես չեմ կարող հստակ գնահատել, թե ինչ շղթայի մաս է այս դեպքը, բայց ոստիկանությունը պարտավոր է հայտնաբերել ապօրինի զենք ունեցողներին: Կան տեսանյութեր, անհնար է, որ չկարողանան բացահայտել հանցագործությունը: Միայն ցանկության բացակայության դեպքում դա կմնա չբացահայտված:

Ոստիկանությունը օրուգիշեր պետք է զբաղվի այս գործով:

Մենք չենք կարող ապրել մի հասարակության մեջ, որտեղ փողոցում հաշվեհարդար են տեսնում համեստ, իրենց գործին նվիրված, հայրենասեր մարդկանց հանդեպ:

Հիշեցնենք. Փարաքար համայնքում ընդդիմադիր «Ապրելու երկիր» կուսակցության ներկայացուցիչ Վալոդյա Գրիգորյանը մարտին հաղթանակ էր տարել ընտրություններում: Գրիգորյանի առաջնորդած «Միասնություն» դաշինքը ստացել էր ձայների ավելի քան 57 տոկոսը:

Այստեղ արտահերթ ընտրություններ նշանակվեցին, երբ «Քաղաքացիական պայմանագրի» ներկայացուցիչ, այդ ժամանակվա համայնքապետ Լյուդվիգ Գյուլնազարյանը հրաժարական տվեց արյունալի մի միջադեպի ներկա գտնվելու պատճառով:

Զրուցեց ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՎԵՐԴԻԿՏ. ԵՐԵԿ ՄԻՔԱՅԵԼ ՍՐԲԱԶԱՆԻ ԴԱՏՆ ԷՐ

Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Արմինե Մելիքսեթյանը սեպտեմբերի 24-ին հրապարակեց Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանի գործով վերդիկտը:

Դատավորը հայտարարեց, որ Միքայել Աջապահյանին պետք է մեղավոր ճանաչել օրենսգրքի 422-րդ հոդվածի 2-րդ մասով (իշխանությունը զավթելուն, տարածքային ամբողջականությունը խախտելուն, ինքնիշխանությունից հրաժարվելուն կամ սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչերը): «Խափանման միջոցը թողնվել է անփոփոխ՝ իր սահմանափակումներով»,- հայտարարեց դատավորը:

Դատարանում ներկաները սկսեցին վանկարկել՝ «ամոթ»:

«Լավ է լինելու», - վերդիկտի հրապարակումից հետո հայտարարեց Միքայել Սրբազանը:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ Հ. ՀԱԿՈԲՅԱՆԸ ՕԵԿ–Ի ՔԱՐՈԶՉԱԿԱՆ TV–ՈՒՄ ԷՐ

Իշխանական պատգամավոր Հասմիկ Հակոբյանը, որը օրերս ընտրվեց ՔՊ վարչության կազմում, մինչ ՔՊ կուսակցությանը միանալը եղել է «Օրինաց երկիր» կուսակցության անդամ: Տարբեր աղբյուրներ պնդում էին նրա անդամակցությունը ՕԵԿ-ին. «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց տեղեկությունը ճշտել անձամբ Հասմիկ Հակոբյանից, ով մեզ հետ զրույցում հերքեց այն:

Հարցին՝ արդյո՞ք ինքը երբեւէ եղել է ՕԵԿ-ի անդամ, եւ եթե այո՝ ինչ ժամանակահատվածում ու ինչ պատճառով է դուրս եկել կուսակցությունից, Հասմիկ Հակոբյանը պատասխանեց. «Ես ՕԵԿ-ի անդամ չեմ եղել: Կուսակցությանն անդամագրվելու դիմում հետեւապես չի կարող լինել: Պարզապես աշխատել եմ Հ3 հեռուստաընկերությունում, որը պատկանում էր այդ կուսակցությանը, բայց կուսակցական գործունեություն չեմ իրականացրել»:

Հիշեցնենք, որ հենց 2017-2018 թվականներին էր, երբ Նիկոլ Փաշինյանը ՕԵԿ-ականներին հասցեագրված քննադատություններով էր հանդես գալիս՝ հիշատակելով նրանց «խայտառակ» լինելը:

Ստացվում է, որ այդ նույն ժամանակաշրջանում այսօրվա ՔՊ-ական պատգամավորը փաստացի գործունեություն էր ծավալում ՕԵԿ-ին պատկանող հեռուստաընկերությունում՝ իրականացնելով այն կուսակցության քարոզչությունը, որը հետեւողականորեն ընդդիմանում էր Նիկոլ Փաշինյանին:

ՄԵԴԱԼՆԵՐ ՍՏԱՑԱՆ ԸՆԿԵՐ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ

Ինչպես ստացվեց, որ ՀՀ նախագահը անկախության տոնի առթիվ մեդալներ շնորհեց ԲԴԽ նախագահի ընկերներին: Դատական համակարգում գործի է դրվել ոչ թե մասնագիտական արժանիքը, այլ ԲԴԽ նախագահի ընկեր լինելն ու քաղաքական իշխանության սրտով որոշում կայացնելը:

Սեպտեմբերի 23-ին ԲԴԽ-ում տեղի էր ունեցել դատավորների պարգեւատրման արարողություն: ԲԴԽ նախագահ Արթուր Աթաբեկյանը մի շարք դատավորների հանձնել էր Անկախության տոնի առթիվ ՀՀ նախագահի շնորհած մեդալները:

«Մխիթար Գոշ»-ի մեդալներ էին հանձնվել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Սերգեյ Սահակյանին, Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Մնացական Հարությունյանին, Սնանկության դատարանի դատավոր Գարիկ Ավագյանին եւ եւս մի քանի դատավորների:

Պարզվում է՝ «Մխիթար Գոշ» մեդալ ստացած դատավորներից շատերը պատահական անձինք չեն. նրանք ԲԴԽ նախագահ Արթուր Աթաբեկյանի երիտասարդ տարիների (մինչ դատավոր դառնալը) ընկերներն են, որոնք դատական դեպարտամենտում նրա հետ ճանապարհ են անցել:

Օրինակ՝ ԲԴԽ նախագահ Արթուր Աթաբեկյանը 2008 թվականից մինչեւ 2012 թվականն աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչությունում՝ որպես ավագ մասնագետ, իսկ ահա «Մխիթար Գոշ» մեդալ ստացած, Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Սերգեյ Սահակյանը 2007 թվականից մինչեւ 2014 թվականը զբաղեցրել է դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչությունում նախ ավագ մասնագետի, ապա վարչության պետի տեղակալի պաշտոնները:

Մյուս մեդալակիրը Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Մնացական Հարությունյանն է, որը 2010 թվականից 2012 թվականն աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտում՝ որպես դատական պրակտիկայի ամփոփման վարչության մասնագետ:

2012 թվականից 2014 թվականն աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտում՝ որպես դատական պրակտիկայի ամփոփման վարչության ավագ մասնագետ:

Ավելին՝ Մնացական Հարությունյանը առավել աչքի ընկավ 2022 թվականին: Բանն էր, որ 2022 թվականի փետրվարի 7-ին ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը գտնվում էր կալանքի տակ, եւ նրա պաշտպանները բողոքներ էին տարել ՀՀ վերաքննիչ դատարան՝ խափանման միջոցի վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշման դեմ: Արդյունքում, Հարությունյանը մերժել էր պաշտպանների բողոքը եւ Ռոբերտ Քոչարյանին թողել էր կալանքի տակ:

«Մխիթար Գոշ» մեդալ էր շնորհվել նաեւ դատավոր Գարիկ Ավագյանին, որը Արթուր Աթաբեկյանի ընկերն է: Բանն այն է, որ մինչ ԲԴԽ նախագահ դառնալը, 2022 թվականին Աթաբեկյանը Սնանկության դատարանի նախագահն էր ու չմոռացավ Սնանկության դատարանում աշխատած ընկերոջը, նրան էլ արժանացրեց մեդալի:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԹՐԱՄՓԻ ԵԼՈՒՅԹԸ՝ ՄԱԿ–ՈՒՄ

ՄԱԿ-ում ունեցած իր ելույթում Թրամփը զգուշացրել է Եվրոպային, որ անվերահսկելի ներգաղթը եւ կլիմայական քաղաքականությունը կործանում են նրա ժառանգությունն ու հանգեցնում «աննախադեպ աղետի»:

«Ժամանակն է դադարեցնել բաց սահմանների ձախողված փորձը: Ձեր երկրները դժոխք են գլորվում»,- հայտարարել է Թրամփը ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի նիստում:

Դրանից առաջ նա թվարկել է ներգաղթի հակառակորդների համար սովորական փաստարկներն այն մասին, որ ներգաղթյալները՝ տարբեր մշակույթների եւ կրոնների մարդիկ, կործանում են ընդունող պետությունների մշակույթը, տնտեսությունը, օրենքն ու կարգը: Թրամփը հայտարարել է, որ իր վարչակազմն արդեն իսկ դադարեցրել է զանգվածային անօրինական ներգաղթը Միացյալ Նահանգներ:

Թրամփը վստահեցրել է, որ համակրում է խնդրահարույց երկրներից փախստականներին: «Բայց մենք պետք է խնդիրները լուծենք նրանց երկրներում, այլ ոչ թե ստեղծենք խնդիրներ մեզ համար», - հայտարարել է ԱՄՆ նախագահը:

Երկրորդ պատճառը, թե ինչու է Եվրոպան «դժոխք գլորվում», ըստ Թրամփի, կլիմայի փոփոխության դեմ պայքարում «կանաչ էներգիային» անցնելու քաղաքականությունն է:

Թրամփը վերականգնվող էներգիան, մասնավորապես հողմային էլեկտրակայանները, անվանել է անհեթեթություն եւ չափազանց թանկ ձեռնարկ, իսկ ՄԱԿ-ում վերջին քառասուն տարվա ընթացքում կլիմայի փոփոխության հետեւանքների մասին արված ապոկալիպտիկ կանխատեսումները որակել է որպես «ամենամեծ խաբեություն»:

Իր գրեթե մեկ ժամ տեւած ելույթի մեկ այլ հատվածում Թրամփը կոչ է արել դահլիճում հավաքված աշխարհի բոլոր երկրների առաջնորդներին պաշտպանել խոսքի եւ դավանանքի ազատությունը՝ ընդգծելով, որ քրիստոնեությունը նույնպես պաշտպանության կարիք ունի: Թրամփի խոսքով՝ այն ներկայումս աշխարհում ամենահալածվող կրոնն է:

ՊԵՍԿՈՎԸ ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է

ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը մեկնաբանել է Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկու հայտարարությունն այն մասին, որ Ռուսաստանին առաջարկել են Ուկրաինայի հետ բարձր մակարդակի հանդիպում անցկացնել Ղազախստանում:

ՌԲԿ ռադիոյի եթերում Պեսկովը նշել է, որ ուկրաինացիները «մեծ քանակությամբ առաջարկներ են տարածում», եւ նախքան Ղազախստանի մասին խոսելը, նշել են երկրներ, որոնք «բացարձակապես անընդունելի են» Ռուսաստանի համար՝ որպես հանդիպման վայր: Պեսկովը որպես օրինակ է բերել Շվեյցարիան եւ Ավստրիան, որոնք «փաստացի այլեւս չեզոք չեն»:

Մամուլի քարտուղարը հիշեցրել է, որ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը առաջադրել է Մոսկվայում նման բանակցություններ կազմակերպելու գաղափարը:

ՀՈՐԴՈՐ՝ ԳԱԶԱՅԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՃԳՆԱԺԱՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԻՋԱՆՑՔ Է ՊԵՏՔ ԲԱՑԵԼ

25 պետության արտաքին գործերի նախարարներ, ինչպես նաեւ ճգնաժամային իրավիճակների կառավարման հարցերով Եվրամիության հանձնակատարը՝ Հաջա Լաբիբը, հանդես են եկել համատեղ կոչով՝ ստիպել Իսրայելին վերագործարկել հումանիտար միջանցքը Գազայի հատվածից դեպի Արեւմտյան ափ եւ Արեւելյան Երուսաղեմ՝ հնարավորություն տալու վիրավոր պաղեստինցիներին տեղափոխվել բուժման նպատակով:

Ըստ Միացյալ Թագավորության արտաքին գործերի նախարարության տարածած հայտարարության՝ միջազգային համայնքը հստակ պահանջում է վերացնել սահմանափակումները, որոնք խոչընդոտում են բժշկական տարհանումներն ու պատշաճ բուժօգնության իրականացումը:

«Մենք վճռական ենք՝ ապահովելու, որ վիրավոր պաղեստինցիները ստանան իրենց անհրաժեշտ բժշկական օգնությունը Պաղեստինի տարածքում: Հումանիտար միջանցքի վերաբացումը կենսական նշանակություն ունի այս նպատակին հասնելու համար», - ասված է հայտարարության մեջ:

Համատեղ հայտարարությանը միացել են Ավստրիայի, Բելգիայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Հունաստանի, Դանիայի, Իռլանդիայի, Իսլանդիայի, Իտալիայի, Կանադայի, Կիպրոսի, Լյուքսեմբուրգի, Լիտվայի, Մալթայի, Նիդեռլանդների, Նորվեգիայի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Սլովակիայի, Սլովենիայի, Ֆինլանդիայի, Ֆրանսիայի, Խորվաթիայի, Շվեյցարիայի եւ Շվեդիայի արտաքին գործերի նախարարները:

Բացի հումանիտար միջանցքի վերագործարկման պահանջից՝ ստորագրող կողմերը նաեւ պատրաստակամություն են հայտնել աջակցել տեղում իրականացվող բժշկական ծրագրերին՝ տրամադրելով ֆինանսական ռեսուրսներ, ուղարկելով մասնագիտական բուժանձնակազմ կամ անհրաժեշտ բժշկական սարքավորումներ:

Նրանք նաեւ ընդգծել են, որ անհրաժեշտ է անհապաղ վերացնել դեղորայքի եւ բժշկական տեխնիկայի մուտքի սահմանափակումները Գազայի հատվածում, քանի որ շարունակվող շրջափակումը սրում է այնտեղի հումանիտար ճգնաժամը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԵՄ–Ն ԸՆԴՄԻՇՏ ԿՀՐԱԺԱՐՎԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԷՆԵՐԳԱԿԻՐՆԵՐԻՑ

Եվրամիությունը մտադիր է մինչեւ 2027 թվականը ընդմիշտ հրաժարվել ռուսական էներգառեսուրսների գնումներից: Այս մասին հայտարարել է Եվրահանձնաժողովի ղեկավար Ուրսուլա ֆոն դեր Լայենը՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստաշրջանի շրջանակներում ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հետ բանակցություններից հետո:

«Մինչեւ 2027 թվականը Եվրոպան ընդմիշտ կշրջի ռուսական էներգակիրների էջը», - գրել է նա՝ X-ում:

ԻՐԱՆԻ ԱԳՆ ԽՈՄՆԱԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է

Իրանի արտաքին գործերի նախարարության խոսնակ Իսմայիլ Բաղաին դատապարտել է Նյու Յորքում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային մասնակցող իրանական պատվիրակության տեղաշարժի նկատմամբ ԱՄՆ-ի կողմից սահմանված սահմանափակումները: Այս մասին նա գրել է X-ի իր էջում:

Նրա խոսքով՝ նման գործողությունների իրական նպատակը ՄԱԿ-ում Իրանի դիվանագիտական գործունեությանը «խոչընդոտելն» է:

«Միացյալ Նահանգների կողմից իրանցի դիվանագետների նկատմամբ համակարգված հետապնդումները խանգարել են իրանցի պատվիրակներին մասնակցել այսպես կոչված «թույլատրված պարամետրերից» դուրս անցկացված մի քանի բազմակողմ միջոցառումների միայն այս շաբաթ», - նշել է Բաղաին:

«Մեր դիվանագետների ճանապարհորդության եւ նույնիսկ նրանց ամենօրյա մթերային գնումների նկատմամբ նման սահմանափակումների կիրառումը ոչ միայն ԱՄՆ-ի՝ Գլխավոր գրասենյակի համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտում է, այլեւ նոր ցածրակետ՝ ցույց տալով ԱՄՆ վարչակազմի կողմից Իրանի ժողովրդի նկատմամբ ցուցաբերված թշնամանքի մակարդակը», - գրել է նախարարության խոսնակը:

ԱՐՄԱՆ ԱԲՈՎՅԱՆԸ ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ Է ՍԿՍՈՒՄ

Արման Աբովյանը, որը լայն հանրությանը առավել հայտնի է «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղում ունեցած մասնակցությամբ եւ երկու անգամ հաղթող թիմի ղեկավարությամբ, ինչպես նաեւ Երեւանի ավագանու եւ Ազգային ժողովի պատգամավորական գործունեությամբ, մեկնարկել է նոր մեդիանախագիծ:

Նախագիծը կոչվում է «Աբովյան Talk» եւ նպատակ ունի անդրադառնալ հասարակական, քաղաքական եւ հանրային հետաքրքրություն ներկայացնող թեմաների:

«Աբովյան Talk»-ը նախատեսում է բաց քննարկումներ եւ վերլուծական դիտանկյուններ, որտեղ շոշափվելու են կարեւոր եւ երբեմն բարդ հարցեր: Նախագիծը կարող է դառնալ հարթակ մտքերի ու տեսակետների ազատ փոխանակման համար՝ նպաստելով հանրային երկխոսությանը:

ՄԻՊ–Ը՝ ՄԵՐՁԱՎԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը խստորեն դատապարտում է սեպտեմբերի 23-ի գիշերը՝ կեսգիշերին մոտ, Մերձավան բնակավայրում տեղի ունեցած ողբերբերգական դեպքը, ինչի հետեւանքով սպանվել են Փարաքար խոշորացված համայնքի ղեկավար Վալոդյա Գրիգորյանը եւ ոստիկանության ծառայող Կարեն Աբրահամյանը:

Նման ծանր հանցանքները խարխլում են հասարակական անվտանգությունը եւ վտանգում իրավունքի գերակայության երաշխիքները:

Անհրաժեշտ է ապահովել դեպքի շուտափույթ, բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ քննություն՝ մեղավոր անձանց անխուսափելիորեն պատասխանատվության ենթարկելու համար:

Պետությունը պետք է ունենա պատշաճ կառուցակարգեր նման դեպքերը կանխարգելելու համար եւ անընդհատ կատարելագործի դրանք:

Մարդու իրավունքների պաշտպանն իր զորակցությունն է հայտնում մահացածների ընտանիքներին ու հարազատներին:

ԼԱՐՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՄԵՐՁԱՎԱՆՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ԻՆՉՈ՞Ւ ՍՊԱՆՎԵՑ ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ

Սեպտեմբերի 23-ի գիշերը սպանել են Փարաքարի համայնքապետ Վալոդյա Գրիգորյանին:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ իրավապահների ձեռքի տակ հայտնված տեսանյութից պարզվել է, որ Փարաքարի համայնքապետ Վալոդյա Գրիգորյանին սպանած վարձու մարդասպանը մեկ անձ է եղել, որը նրան սպասել է իր նորակառույց տան դարպասների մոտ:

ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունները հետագայում հաստատվեցին երբ լրատվական դաշտում հայտնվեցին տեսանյութեր, որտեղ հաստատվեց, թե ինչպես է վարձու մարդասպանը նախ կրակահերթ արձակել Գրիգորյանի ուղղությամբ, հետո հետ է եկել համոզվելու՝ արդյոք նա մահացած է, եւ մի անգամ էլ այդ ժամանակ է «ստուգողական կրակոց» արձակել եւ հեռացել է:

ArmLur.am-ի աղբյուրները փոխանցում էին, եւ տեսանյութում եւս հաստատվեց, որ մարդասպանը նաեւ զենքի խզակոթով հարվածներ է հասցրել Գրիգորյանին սպանելուց հետո: Ըստ էության, վարձու մարդասպանի թիրախը եղել է հենց Վալոդյա Գրիգորյանը:

Իրավապահների մոտ առկա տեսանյութում երեւում է, որ ոստիկան Կարեն Աբրահամյանը երկար ժամանակ վիրավոր վիճակում փորձել է «բռնվելով» մոտենալ Գրիգորյանին եւ օգնություն ցուցաբերել նրան, սակայն ցավոք նրան չի հաջողվել փրկել ո՛չ իրեն, ո՛չ էլ ընկերոջը՝ Վալոդյա Գրիգորյանին: Աբրահամյանը եւս տեղում մահացել է:

Հիշեցնենք, որ հայտնի է նաեւ, որ Մերձավանի կրակոցների հետեւանքով երրորդ անձ կա, ով վիրավորում է ստացել: Նա Արծրուն Գալստյանն է: Վերջինս վիրահատվել է, նրա կյանքին վտանգ չի սպառնում: Վիրավորը ոստիկանական ծառայող չէր, իսկ սպանված ոստիկանը ծառայության մեջ չի եղել, որի մասին հայտնել էր ՆԳՆ մամուլի խոսնակ Նարեկ Սարգսյանը:

Նշենք, որ ArmLur.am-ը տեղեկացավ, որ սպանված Կարեն Աբրահամյանը ունի երկու անչափահաս երեխա: Նա մոտ ութ տարի աշխատել է քրեական ոստիկանությունում եւ եղել է Վալոդյա Գրիգորյանի մտերիմ ընկերներից:

Այն, որ Վալոդյա Գրիգորյանին եւ նրա մտերիմ շրջապատին որոշ շրջանակներ ատամները սրած էին հետեւում, հայտնի է բոլորին:

Բանն այն է, որ այս տարվա փետրվարի 5-ին Մերձավանում հնչել էին կրակոցներ: Ըստ մերձավանցիների՝ համայնքում տեւական ժամանակ նախկին ու ներկա պաշտոնյաները գյուղը բաժանել էին երկու մասի եւ գյուղի տղաներին հանել միմյանց դեմ: Ըստ լուրերի՝ անգամ Մերձավան համայնքի ղեկավար Ախտոյանի թիմակիցները մարդ էին ծեծել, եւ ծեծի շուրջ վեճը այնքան էր տարածվել, որ հնչել էին կրակոցներ ու սպանվել էր մեկ անձ:

Այս դեպքով մեղադրյալի աթոռին էին հայտնվել նաեւ Վալոդյա Գրիգորյանի եղբայրը եւ նրա մտերիմ շրջապատի անդամները: Արդյունքում՝ կրակոցներից ամիսներ անց համայնքում ընտրություններ եղան, եւ համայնքապետ ընտրվեց Վալոդյա Գրիգորյանը: Սակայն համայնքում ներքին լարված մթնոլորտը իշխանության թիմակիցների եւ Վալոդյա Գրիգորյանի միջեւ շարունակում էր պահպանվել:

Որքանով ընտրված համայնքապետի սպանությունը կապ ունի յոթ ամիս առաջ հնչած կրակոցների հետ՝ հուսանք, որ կպարզի քննությունը:

Ողջ իրավապահ համակարգը ԱԱԾ հատուկ ստորաբաժանումները, ոստիկանության հատուկ ստորաբաժանումները զինված մտել են Փարաքար համայնք՝ հնարավոր վնդետա կանխելու համար: Իրավապահ համակարգը որոշակի հետքի վրա է:

Հավելենք, որ ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն, իրավապահ համակարգում պաշտոնանկություններ են սպասվում:

Բանն այն է, որ քաղաքական իշխանությունները բացատրել են, որ այս դեպքը ամիսներ առաջ տեղի ունեցած կրակոցների, համայնքում իրավիճակը չտիրապետելու հետեւանք է, ու կոնկրետ անձինք, ինչպես նախաքննական մարմնից, այնպես էլ բարձրաստիճան ոստիկանությունից, պետք է ազատվեն:

ArmLur.am-ի թղթակիցը նկատել էր, որ ոստիկաններն ու հատուկ ջոկատայիններ-ը հսկում են Մերձավանի նախկին համայնքապետ Միհեր Ախտոյանի տան հատվածը:

Հիշեցնենք, որ զինված հարձակում էր եղել Փարաքար խոշորացված համայնքի Մերձավան բնակավայրի վարչական ղեկավարի տան ուղղությամբ: Մեկ անձ զոհվել էր, մեկը՝ վիրավորվել:

Հավելենք՝ ՔԿ-ից հայտնել էին, որ Մերձավանի համայնքապետի տան ուղղությամբ տեղի ունեցած զինված հարձակման դեպքով կա 3 ձերբակալված անձ, 9 անձի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել: Չնայած քննչական կոմիտեն հրաժարվում է ասել, թե Մերձավանի գյուղապետ Միհեր Ախտոյանին առաջադրվել է մեղադրանք, թե ոչ, սակայն ArmLur.am-ին հավաստի աղբյուրները հայտնեցին, որ համայնքի ղեկավարը անձամբ ներկայացել է իրավապահներին, ու 9 մեղադրյալներից մեկը նա է:

Դեպքի առթիվ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի (2 դրվագ), 44-155-րդ հոդվածի 1-ին մասի եւ 335-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Նախաքննության ընթացքում նշանակվել են դատաբժշկական փորձաքննություններ:

Կատարվում են ապացուցողական եւ վարութային գործողություններ:

Փարաքարում իր տան բակում սպանված համայնքապետ Վալոդյա Գրիգորյանը 42 տարեկան էր: Նա ուներ չորս երեխա: Վ. Գրիգորյանը Ռուբեն Վարդանյանի հիմնադրած «Ապրելու երկիր» կուսակցության անդամ էր:

Ի՞նչ կենսագրություն ունի Վալոդյա Գրիգորյանը

Վալոդյա Գրիգորյանը ծնվել է 1983թ. նոյեմբերի 16-ին Արմավիրի մարզի Մերձավան համայնքում:

1991-2001 թթ. հաճախել է Մերձավան համայնքի միջնակարգ դպրոցը:

2001-2005 թթ. սովորել է ՀՀ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում՝ «Ֆիզկուլտուրան եւ սպորտը» մասնագիտությամբ, ստացել է «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մանկավարժի, կարատեդոյի մարզչի» որակավորում:

2016-2018թթ. ստացել է Կառավարման մագիստրոսի աստիճան՝ Կառավարում մասնագիտությամբ:

2022թ.-ին ավարտել է «Մատենա» միջազգային դպրոցի «ՀՀ համայնքների արդյունավետ կառավարում» համայնքային պաշտոնյաների մասնագիտական զարգացման ծրագիրը:

2004թ. աշխատել է Մերձավանի «Կրթություն եւ մշակույթ» միացյալ տնօրինությունում՝ որպես սպորտ հրահանգիչ:

2005-2007թթ. աշխատել է Մերձավանի գյուղապետարանում:

2007-2011թթ. աշխատել է Մերձավանի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետի համայնքային ծառայողի պաշտոնում: Նրան շնորհվել է համայնքային ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

2011-2016 թթ. զբաղվել է անհատ ձեռնարկատիրական գործունեությամբ:

2016թ-2021թ.եղել է «Վալոդյա Գրիգորյան» ՍՊԸ-ի հիմնադիր տնօրենը:

2023թ. ապրիլի 22-ին ընտրվել է «Ապրելու երկիր» կուսակցության քաղաքական խորհրդի անդամ:

2021-2025թ. Փարաքար համայնքի ավագանու անդամ է եւ Փարաքար համայնքի «Ապրելու Երկիր» խմբակցության ղեկավար:

2025թ.-ի ապրիլի 19-ին ստանձնել է Փարաքար համայնքի ղեկավարի լիազորությունները:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԶԻՆԱՄԹԵՐՔ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ

Սեպտեմբերի 22-ին անհայտ անձը զանգահարել է Կոտայքի մարզի օպերատիվ կառավարման կենտրոն ու հայտնել է, որ Չարենցավան քաղաքի «Սերվիսի» խաչմերուկի մոտ թողել է զենք-զինամթերք:

Համայնքային ոստիկանության Չարենցավանի բաժնից մեկնած օպերատիվ խումբը նշված վայրում հայտնաբերել է նռնականետ, «Մակարով» ատրճանակ, առանց պայթուցիչի երեք նռնակ, տարատեսակ 112 փամփուշտ եւ այլն:

ՔԿ-ն հորդորում է ապօրինի պահվող զենք-զինամթերքը կամավոր հանձնել ոստիկանություն՝ քրեական պատասխանատվությունից խուսափելու համար:

ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՎԱԶԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Քրեական ոստիկանության Արարատի մարզի ծառայողները սեպտեմբերի 5-ին օպերատիվ տեղեկություն էին ստացել, որ Վերին Արտաշատ գյուղի բնակիչ 27-ամյա երիտասարդը հափշտակել է մի աղջկա բջջային հեռախոսը եւ անձնական իրերը:

Համայնքային ոստիկանության Արտաշատի բաժնի ծառայողները ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզել էին, որ սեպտեմբերի 5-ի առավոտյան ժամը 7-ին գյուղի Հախնազարյան փողոցում 27-ամյա երիտասարդը ինչ-որ նյութ էր փչել 20-ամյա տուժողի աչքերին, ապա հափշտակելով նրա բջջային հեռախոսը, բանկային քարտը եւ պայուսակը, որի մեջ փող եւ անձնական իրեր էին, «Հոնդա» մակնիշի մեքենայով դիմել էր փախուստի: Նախաձեռնվել էր քրեական վարույթ:

Հետագա միջոցառումներին միացած Քրեական ոստիկանության Արարատի մարզային վարչության ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում սեպտեմբերի 22-ին 27-ամյա երիտասարդը հայտնաբերվել, ձերբակալվել եւ ներկայացվել է վարույթն իրականացնող մարմին:

«ԿԱԼԱՇՆԻԿՈՎԻ» ԻՆՔՆԱՁԻԳ ԵՎ ԶԻՆԱՄԹԵՐՔ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ

Համայնքային ոստիկանության Սեւանի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքի հերթական արդյունքը գրանցվեց սեպտեմբերի 22-ին:

Ոստիկանության Գեղարքունիքի մարզի օպերատիվ կառավարման կենտրոն զանգահարած քաղաքացին հայտնել էր, որ զենք-զինամթերք է թողել պանթեոնի մուտքի մոտ:

Մեկնած իրավապահները Սեւանի քաղաքային պանթեոնի մուտքի մոտ հայտնաբերել են պոլիէթիլենային տոպրակ, որի մեջ կար «Կալաշնիկովի» ինքնաձիգ, մարտական նռնակ՝ պայթուցիչով, ինքնաձիգի պահեստատուփ, 120 փամփուշտ եւ այլ զինամթերք:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 23-ից 24-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 112 դեպք, որից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴԻԼԻՋԱՆԸ՝ ԱՌԱՆՑ ՆՈՏԱՐԻ

Շուրջ երեք ամիս է, ինչ Դիլիջան խոշոր համայնքն առանց նոտարի է մնացել: Դիլիջանում երկար տարիներ նոտար աշխատած, Վանաձորի բնակիչ Ալբերտ Եգանյանը, օրենքով սահմանված կարգով, տեղափոխվել է եւ նոտար է աշխատում Վանաձորում: Դիլիջան համայնքը մնացել է առանց նոտարի, Դիլիջան քաղաքի, Գոշ, Հաղարծին, Թեղուտ, Հովք, Խաչարձան, Աղավնավանք գյուղերի բնակիչները նոտարական գործարքներ կատարելու համար ստիպված են հասնել Վանաձոր, Իջեւան քաղաքներ: ՀՀ արդարադատության նախարարությունը ինչո՞ւ չի լուծում այդ հարցը:

Հավելենք, որ Տավուշի մարզի Իջեւան եւ Նոյեմբերյան քաղաքներում այժմ գործում է երկուական նոտար:

ՍՐԲԱՎԱՅՐԵՐԸ ԱՂՏՈՏՈՒՄ ԵՆ

Տավուշի մարզի անտառներում կան հուշաղբյուրներ, որոնց տաղավարներում մարդիկ բարեկամներով, ընկերներով քեֆեր են անում: Այդ հուշաղբյուրների մի մասը կառուցվել են ազատամարտում զոհվածների կամ կյանքից վաղաժամ հեռացած անձանց հարազատների կողմից՝ ի հիշատակ նրանց: Այդ հուշաղբյուրների տաղավարներում խրախճանք անել ցանկացողների թիվն այնքան մեծ է, որ հուշաղբյուրի մոտ նախապես գրություններ են փակցնում՝ հանգստի գոտու տարածքի տվյալ օրը զբաղված լինելու մասին: Այդ հուշաղբյուրներում խրախճանք անողների թիվը շատ մեծ է շաբաթ-կիրակի եւ տոնական օրերին: Ցավոք, խրախճանք անողների մի մասը քեֆից հետո չի մաքրում տարածքը, հուշաղբյուրի տաղավարի մոտ մնում են տարատեսակ շշեր, պոլիէթիլենային տոպրակներ, սննդի մնացորդներ եւ այլն: Հուշաղբյուր կառուցած, այդ նպատակով մեծ ծախսեր արած մարդիկ հարկադրված հետո իրենք են մաքրում քեֆ արած անբարեխիղճների փոխարեն:

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հետեւյալ տեղեկատվական հարցումն ենք արել. «Տավուշի մարզպետարանը սերտ համագործակցում է «ՀիմնաՏավուշ» հիմնադրամի հետ: Դուք, Տավուշի մարզպետի աշխատակազմը ինչո՞ւ միջոցներ չի ձեռնարկում, որպեսզի «ՀիմնաՏավուշ» հիմնադրամի Լուսաձորի անասնաֆերմայից տարիներ շարունակ միջպետական ավտոճանապարհին տարածվող գարշահոտը վերացվի»: Մարզպետարանից պատասխանել են. «Խնդրի կարգավորման նպատակով հարցը քննարկվել է Օ դը Սեն նահանգի եւ Ֆրանսիայի հայկական հիմնադրամի ղեկավարների մասնակցությամբ: Ձեռք է բերվել պայմանավորվածություն «ՀիմնաՏավուշ» հիմնադրամի հարակից տարածքում կոյուղու մաքրման կայան կառուցելու համար: Առկա է ծրագրի փաթեթը, որը ներկայումս գտնվում է ՀՀ համապատասխան գերատեսչությունների եւ Ֆրանսիայի Օ դը Սեն նահանգի դեպարտամենտի քննարկման փուլում»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽԱՄԵՆԵԻԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

«ՁՆԱՅԱԾ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՃՆՇՈՒՄՆԵՐԻՆ՝ ԻՐԱՆԸ ԿՔԱՐԳԱՆԱ»

Իսլամական հեղափոխության առաջնորդ Այաթոլլահ Սեյեդ Ալի Խամենեիի ավագ խորհրդական Ալի Ակբար Վելայաթին զգուշացրել է, որ Եվրոպայի կողմից ՄԱԿ-ի պատժամիջոցները վերսկսելու ուղղությամբ ձեռնարկված քայլը միայն կխորացնի Եվրոպայի մեկուսացումը միջազգային ասպարեզում:

«Ալ Մայադին» հեռուստաալիքին տված հարցազրույցում Վելայաթին հայտարարել է, որ այս որոշումը խախտում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2231 բանաձեւի ոգին եւ միտված է ճնշում գործադրել դիմադրության ճակատի վրա՝ փորձելով խոչընդոտել Իրանի գիտական եւ պաշտպանական առաջընթացը:

«Այս քայլը ոչ մի գործնական արդյունք չունի եւ ծառայում է որպես քաղաքական ու քարոզչական գործիք: Դա միայն ավելի կմեկուսացնի Եվրոպային աշխարհից», - նշել է Վելայաթին:

Նա շեշտել է, որ Իրանը միշտ էլ կարեւորել է խաղաղ դիվանագիտությունը, սակայն արտաքին դավադրություններին կպատասխանի ուժով եւ ազգային արժանապատվությամբ:

«Իրանը, հենվելով հավատքի, գիտության եւ ազգային համերաշխության վրա, կշարունակի իր զարգացման ուղին՝ չնայած Արեւմուտքի ճնշումներին», - հավելել է նա:

Վելայաթին խստորեն դատապարտել է նաեւ վերջին իսրայելական հարձակումը Կաթարի վրա՝ ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի աջակցությունը որակելով որպես «քրիստոնեական խաչակրաց պատերազմների շարունակություն»:

Նա նշել է, որ հարձակումը նպատակ ուներ թիրախավորել ՀԱՄԱՍ-ի հրամանատարներին, սակայն ձախողվելով՝ Վաշինգտոնը փոխել է իր դիրքորոշումը՝ ձեւացնելով, թե չի աջակցել այդ գործողությանը:

«ԱՄՆ-ի ղեկավարները որեւէ սկզբունքի հետեւողականություն չունեն՝ առավոտյան մի բան են ասում, երեկոյան՝ մեկ այլ», - նշել է նա:

Վելայաթին նաեւ մեղադրել է Մեծ Բրիտանիային՝ իբր իսրայելական օդուժին վառելիք մատակարարելու համար՝ շեշտելով, որ Լոնդոնը դա ներկայացրել է որպես «համատեղ զորավարժություն Կաթարի հետ»՝ հասարակական կարծիքը մոլորեցնելու նպատակով:

«Արեւմտյան ուժերը շարունակում են չխնայել ոչ մի հանցանք իսլամական ժողովուրդների դեմ», - ասել է Վելայաթին՝ հույս հայտնելով, որ իսլամական եւ արաբական աշխարհը կսովորի այս դառը փորձից:

Վելայաթին անդրադարձել է նաեւ տարածաշրջանային զարգացումներին՝ նշելով, որ «Հեզբոլլահի» զինաթափման փորձերը դատապարտված են ձախողման:

«Դիմադրությունը այսօր ավելի ուժեղ է, փորձառու եւ վճռական», - ասել է նա:

Նա նաեւ նշել է, որ Իրաքի ժողովրդական մոբիլիզացիոն ուժերը շարունակում են դիմադրել ԱՄՆ-ի ծրագրերին:

Գազայի վերաբերյալ Վելայաթին Իսրայելի գործողությունները որակել է որպես «մարդկության դեմ հանցագործություն եւ ցեղասպանության փորձ»՝ ընդգծելով, որ թիրախավորվում են երեխաներ, հղի կանայք, մտավորականներ եւ ենթակառուցվածքներ:

Վերջում Վելայաթին կոչ է արել.

- բացել մարդասիրական անցումներ Գազա,
- ստեղծել հատուկ դատարան իսրայելական պատերազմական հանցագործությունների համար,
- կիրառել պատժամիջոցներ Իսրայելի դեմ,
- ապահովել անկեղծ եւ չցենզուրացված լուսաբանում միջազգային լրատվամիջոցների կողմից:

Նա նաեւ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի քաղաքականությունը համեմատել է Հիտլերի վարած քաղաքականության հետ՝ նշելով, որ Վաշինգտոնը կրկնում է պատմությունը՝ չհասնելով դրական արդյունքի:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՈՇՈՐ ՊԱՅԹՅՈՒՆԻ 2-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

Սեպտեմբերի 25-ին լրանում է Արցախի Հայկազով կոչվող զորամասի վառելիքի պահեստամասում տեղի ունեցած խոշոր պայթյունի 2-րդ տարելիցը:

2023 թվականին՝ Արցախյան վերջին պատերազմից հետո, սկսվել էր զանգվածային բռնի տեղահանումը: Շուրջ 9 ամիս տեւած շրջափակման պատճառով շատերը ունեին վառելիքի խնդիր:

Խնդիրը համակարգված լուծելու համար Արցախի տեղեկատվական շտաբը սեպտեմբերի 25-ի առավոտյան հայտնել էր, որ ՀՀ տեղափոխվել ցանկացող բոլոր քաղաքացիներին տրվելու է այդ հնարավորությունը եւ ժամը 14:00-ից Ստեփանակերտի թվով 5 բենզալցակայանում նրանց կտրամադրվի անվճար վառելիք:

Վառելիքի ստացման նպատակով քաղաքացիների մեծ խցանումներ էին առաջացել բենզալցակայանների մերձակա տարածքներում: Կատարվածի վերաբերյալ տարբեր վարկածներ են շրջանառվում, սակայն առ այսօր չկա հստակ պարզաբանում, թե ինչի հետեւանքով է տեղի ունեցել պայթյունը:

Ստեփանակերտից ոչ հեռու գտնվող բենզինի պահեստի տարածքում տեղի ունեցած հուժկու պայթյունի հետեւանքով գրանցվել է 218 զոհ, 120 վիրավոր, 21 անհետ կորած:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ԳՏԵԼ ԵՆ ԲՈՐԻՍ ԱՎԱԳՅԱՆԻ ՄԱՐՄԻՆԸ

Թելեգրամյան ալիքները գրում են, որ երեկ Սանկտ Պետերբուրգում Հայաստանի հյուպատոսության շենքում մահացած են գտել փախուստի դիմած Արցախի նախագահի հատուկ հանձնարարությունների գծով նախկին ներկայացուցիչ Բորիս Ավագյանին:

Ավելի վաղ նա փախել էր դատարանից, որտեղ նրան պետք է խափանման միջոց ընտրեին ավելի քան 4,2 միլիարդ ռուբլի մաքսատուրքերի վճարումից խուսափելու գործով: Դեռ երեկ Ավագյանը տեսանյութ տարածեց՝ հայտնելով, որ գտնվում է Սանկտ Պետերբուրգում Հայաստանի հյուպատոսության շենքում եւ խնդրում է իրեն արտահանձնել Հայաստան:

Նախնական տվյալներով՝ Բորիս Ավագյանը ինքնասպան է եղել:

Տեղեկացնենք, որ Ավագյանը հետախուզվում էր Երեւանում սահմանի անօրինական հատման եւ փողերի լվացման համար:

Հիշեցնենք, որ Բորիս Ավագյանը եղել է Արցախի Հանրապետության նախագահի հատուկ հանձնարարությունների գծով ներկայացուցիչ, նախագահ Բակո Սահակյանի խորհրդականը, իսկ վերջին տարիներին էլ ծառայության էր անցել ԱՀ ՆԳՆ ԱԻՊԾ-ում՝ զբաղեցնելով ԱԻՊԾ պետի տեղակալի պաշտոնը: 2020 թվականի պատերազմից հետո էլ Ավագյանը միջամտել էր գերիների փոխանակման եւ գերիներին Բաքվից վերադարձնելու գործընթացների կազմակերպմանը: Նա մշտապես ներկա էր գտնվում գերիների փոխանակման ու վերադարձման քննարկումներին եւ մի շարք գերիների վերադարձը հնարավոր եղավ նրա եւ ռուս գեներալ Մուրադովի բանակցությունների արդյունքում:

Նյութերը՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԻ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 15 պատահար, 1 մարդ մահացել է, 19-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅԻՍԻՑ ԱՃԵԼ Է

Ռուսաստանի եւ Իրանի միջեւ ապրանքաշրջանառությունը, մայիսին ազատ առեւտրի գոտու (ԱԱԳ) մասին համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո, տարեկան կտրվածքով աճել է 35%-ով, այդ թվում՝ Ռուսաստանի արտահանումը՝ 50%-ով:

Այս մասին հայտարարել է Ռուսաստանի Դաշնության տնտեսական զարգացման նախարար Մաքսիմ Ռեշետնիկովը՝ Իրանի արդյունաբերության, հանքերի եւ առեւտրի նախարար Սեյեդ Մոհամմադ Աթաբակի հետ հանդիպման ժամանակ:

Այս մասին հայտնում է ՌԴ Տնտեսական զարգացման նախարարության մամուլի ծառայությունը:

«Արդեն այսօր մենք տեսնում ենք համաձայնագրի իրականացման դրական արդյունքը. դրա գործադրման առաջին եռամսյակի ընթացքում ռուս-իրանական ապրանքաշրջանառությունն աճել է 35%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Միեւնույն ժամանակ, Ռուսաստանի արտահանումը Իրան աճել է 50%-ով: Եվ այս ցուցանիշները դեռ վերջնական չեն», - նշել է Ռեշետնիկովը:

Նախարարի կարծիքով՝ համաձայնագրի հետագա արդյունավետ գործարկման համար հատուկ ուշադրություն պետք է դարձնել տեխնիկական կարգավորման համակարգերի, սանիտարական եւ ֆիտոսանիտարական միջոցառումների համաժամեցմանը, մաքսային վարչարարության պարզեցմանը, էլեկտրոնային առեւտրի զարգացմանը եւ թվային հարթակների ստեղծմանը:

Սեյեդ Մոհամմադ Աթաբակը կողմ է արտահայտվել փոխհաշվարկների անխափան համակարգի զարգացմանը, ստանդարտների մերձեցմանը եւ համագործակցության ընդլայնմանն արդյունաբերության առաջնահերթ ճյուղերում:

Porsche-Ի ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ ԴՐԱԿԱՆ ՉԵՆ

Գերմանական լյուքս դասի ավտոմեքենաներ արտադրող Porsche AG-ն հաստատել է 2025 թվականի եկամուտների կանխատեսումը՝ 37-38 մլրդ եվրոյի մակարդակում:

Միաժամանակ ընկերությունը վատթարացրել է օպերացիոն շահութաբերության կանխատեսումը. այժմ այն սպասվում է մինչեւ 2%, մինչդեռ ավելի վաղ կանխատեսվում էր 5-7%:

Ավտոմոբիլային գործառնությունների EBITDA-ի շահութաբերությունը կանխատեսվում է 10.5-12.5% միջակայքում՝ նախկին 14.5-16.5% փոխարեն:

Ընկերության փոխանցմամբ՝ կանխատեսումների վատթարացումը կապված է նոր էլեկտրամոբիլային հարթակի մշակման ժամանակացույցի փոփոխության հետ, որը նախատեսվում է 2030-ական թվականներին:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ԿԱՅԱՑԵԼ Է Fastex-Ի ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՀՖՀՀ-Ի ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ս.թ. սեպտեմբերի 16-ին Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի դահլիճում «Ֆասթեքսի» աջակցությամբ կրկին տեղի է ունեցել «Կոմիտաս» անունը կրող շրջանավարտների դիպլոմների հանձնման արարողությունը:

Այս տարի դիպլոմներ են հանձնվել մարքեթինգի եւ կառավարման, ինչպես նաեւ ԻԿՄ, իրավագիտության եւ ֆինանսների ֆակուլտետների ուսանողներին:

Հայաստանում ֆրանսիական համալսարանի ռեկտոր Սալվա Նակուզին, շնորհավորելով ուսանողներին ու նրանց ծնողներին, նշեց, որ այս տարվա դիպլոմների հանձնման արարողությունը բացառիկ է, քանի որ այս տարի նշում են համալսարանի 25-ամյակը: Նա իր խոսքում ասել է. «Ֆասթեքսը ՀՖՀՀ-ի ամենակարեւոր եւ երկարաժամկետ գործընկերից է: Բաղալյան եղբայրները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում մեր համալսարանի նկատմամբ եւ կատարել են շատ ներդրումներ: Նրանք ամեն տարի մեզ տրամադրում են կրթաթոշակներ: «Ֆասթեքսում» աշխատում են ՀՖՀՀ-ի շատ շրջանավարտներ, ովքեր զբաղեցնում են նախագծերի ղեկավարների պաշտոններ եւ «Ֆասթեքսի» համար շատ կարեւոր աշխատակիցներ եմ: Ես ամենայն անկեղծությամբ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել «Ֆասթեքսին» համատեղ աշխատանքի եւ Հայաստանին ու հայ երիտասարդությանն իրենց նվիրման համար:

Առջեւում սպասվում են ավելի հետաքրքիր համագործակցություններ: Մեծ հույս ունեմ ապագայում ավելի ամրապնդելու մեր գործակցությունը՝ շատ կարեւոր թեմաների շրջանակում, ինչպիսին են արհեստական բանականությունը, բլոքչեյնը: Եվս մեկ անգամ շատ շնորհակալ եմ ձեր նվիրվածության եւ վստահության համար»:

«Բաղալյան եղբայրներ» ընկերությունների խմբի խորհրդի անդամ Վախթանգ Աբրահամյանը հանդես է եկել ելույթով. «Մեզ համար կրթությունը ոչ միայն արժեք է, այլեւ ներդրում ապագայում: Վստահ ենք, որ գիտելիքը մեր ժամանակների ամենահզոր արժույթն է: Հենց կրթությունն է, որը թույլ է տալիս արարել, ստեղծել եւ այսօրվա մարտահրավերները վերափոխել վաղվա հնարավորությունների», - իր խոսքում նշել է նա:

Հիշեցնենք, որ «Բաղալյան եղբայրներ» ընկերությունների խումբը 2021 թ.-ից սկսած աջակցում է Հայաստանում ֆրանսիական համալսարանի շրջանավարտների դիպլոմների հանձնման միջոցառմանը: «Ֆասթեքսի» հիմնադիր Վիգեն Բաղալյանը հանդիսանում է համալսարանի հոգաբարձուների խորհրդի անդամ: Ընկերությունների խումբն ամեն տարի կրթաթոշակներ է հատկացնում ինչպես համալսարանի ուսանողներին, այնպես էլ ասպիրանտներին: 2020 թ.-ին ընկերությունների խումբը ճանաչվել է երկրորդ գործատուն՝ համալսարանի շրջանավարտների ներգրավվածության ցուցանիշով: Ընկերությունը հանդիսանում է համալսարանի թոփ գործատուներից եւ այս պահին «Ֆասթեքսում» աշխատում է ՀՖՀՀ-ի ավելի քան երեսուն շրջանավարտ: Բացի դրանից, «Ֆասթեքսը» մշտապես մասնակցություն է ունենում ՀՖՖ-ի աշխատանքի տոնավաճառներին: Համալսարանի ուսանողները պարբերաբար հանդիպումներ են ունենում «Ֆասթեքսի» թիմերի հետ: Արդեն կայացել է երկու հանդիպում «Ֆասթեքսի» իրավաբանական բաժնի հետ: Մասնագետները անդրադարձել են աշխատանքին վերաբերող մանրամասներին, կիսվել իրենց փորձով:

Fastex-ի մասին

Fastex-ն արագ զարգացող Web3 էկոհամակարգ է, որն իր օգտատերերին տալիս է հսկայական հնարավորություններ եւ հարմարավետ միջավայր՝ առաջարկելով Fastex Exchange կրիպտո փոխանակման հարթակը, Fastex Card-ը, Yo Wallet-ը եւ ftNFT-ն՝ իր հարթակներով եւ ֆիզիթալ սփեյսներով, ինչպես նաեւ YoHealth՝ առողջ ապրելակերպը խթանող հավելվածը: Fastex-ը կարեւորում է անվտանգ եւ հուսալի միջավայրի ապահովումը համաշխարհային թվային ֆինանսների զարգացող աշխարհում՝ մշտապես հետեւելով ոլորտի միտումներին:

«ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ» ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ՝ ԱԺ-ՈՒՄ

Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում գործունեություն իրականացնող շահագրգիռ կողմերի մասնակցությամբ՝ Ազգային ժողովում տեղի են ունեցել խորհրդարանական լսումներ՝ «Երեխաների իրավունքների պաշտպանության պետական վերաբերելի քաղաքականությունը» թեմայով:

Օրակարգում ներառված է եղել աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ մշակված եւ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Երեխայի իրավունքների եւ երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքն ընդունելու եւ հարակից օրենքներում լրացումներ կատարելու մասին նախագծերի փաթեթը:

Անդրադառնալով նախատեսվող բարեփոխումների իրականացման անհրաժեշտությանը՝ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանն ընդգծել է երեխաների պաշտպանության կարեւորությունը՝ շեշտելով, որ այն պարզապես սոցիալական քաղաքականություն չէ, այլ ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման, անկախության, անվտանգության եւ բարեկեցիկ ապագայի հիմքը: Նախարարը նաեւ նշել է, որ Հայաստանի Հանրապետությունը վճռական հանձնառություն է ստանձնել երեխաների իրավունքների ներառման, արդարության եւ պաշտպանության սկզբունքների պահպանման հարցում՝ ոլորտային քաղաքականության առանցքում դիտարկելով երեխայի լավագույն շահի ապահովումը:

Իր ելույթում աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Տաթեւիկ Ստեփանյանը նշել է, որ օրենսդրական փոփոխությունները լիովին համահունչ են ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին եւ վկայում են բովանդակային բարեփոխումների ուղին շարունակելու պետության վճռականության մասին:

«Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականության առանցքում երեխայակենտրոն պետական համակարգի ստեղծումն է, որտեղ յուրաքանչյուր որոշման հիմքում դրված է երեխայի լավագույն շահը: Այս օրենսդրական բարեփոխումները վերաբերում են շուրջ 700 հազար երեխայի կյանքին ու ապագային՝ սահմանելով ոչ միայն վերջիններիս պաշտպանված լինելու իրավունքը, այլ նաեւ արժանապատիվ զարգանալու, կրթվելու եւ ներուժը բացահայտելու հնարավորությունը՝ ցանկացած բռնությունից զերծ միջավայրում»,- նշել է Տաթեւիկ Ստեփանյանը:

Տաթեւիկ Ստեփանյանը մանրամասնել է երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում համայնքի դերի բարձրացման, ինչպես նաեւ խնամատարության ինստիտուտի, որդեգրման գործընթացի, ինչպես նաեւ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում գործունեություն իրականացնող մի շարք գերատեսչությունների գործառույթների վերաբերյալ նախագծերի փաթեթով նախատեսված փոփոխությունները: Այս համատեքստում ընդգծվել է նաեւ ներդրվելիք տեղեկատվական համակարգի կարեւորությունը, ինչը համայնքային մակարդակում մեծ կարեւորություն կունենա երեխայի պաշտպանության դեպքի վարման, երեխային կարիքահենք ծառայությունների տրամադրման, մշտադիտարկման, հաշվետվողականության ու թափանցիկության ապահովման գործում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

20-ՐԴ ԴԱՐԻ ՈՍԿԵ ԵՐԱԺԻՇՏԸ

ԱՅՍՕՐ ՀԱՆՃԱՐԵՂ ԳԼԵՆ ԳՈՒԼԴԻ ԾՆՆԴՅԱՆ ՕՐՆ Է

Գլեն Գուլդը 20-րդ դարի երկրորդ կեսի ամենահայտնի դաշնակահարներից մեկն է. կատարող-նորարար, երաժիշտ, ով նոր դարաշրջան բացեց Բախի ստեղծագործությունների ընթերցմամբ: Նրա նվագացանկում, բացի Բախից, առանձնահատուկ տեղ են զբաղեցնում Բեթհովենի բոլոր կոնցերտները եւ բազմաթիվ սոնատներ:

Այսօր՝ սեպտեմբերի 25-ին, նշվում է Գլեն Գուլդի ծննդյան 93-րդ տարեդարձը: «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է նախորդ դարի ամենաունիկալ երաժիշտներից մեկի կյանքի եւ ստեղծագործական ուղու մասին:

Երիտասարդ հասակում Գուլդը բավականին հանգիստ ու փակ երեխա էր, ինչը հաճախ ընկալվում էր որպես առանձնահատկություն՝ «այլմոլորակային» երեխայի նման: Գուլդի համար երաժշտությունը պարզապես նվագել չէր նշանակում, այն եղել է աշխարհը բացահայտելու ու ինքնարտահայտվելու միջոց: Նա նվագում էր Բախի, Բեթհովենի, Ալբան Բերգի ստեղծագործությունները, եւ միշտ ձգտում էր բացահայտել երաժշտության նոր կողմերը՝ նույնիսկ ամենահայտնի ստեղծագործությունը դարձնելով յուրահատուկ:

Գուլդը սկսեց ուսումնասիրել երաժշտական գրականություն երեք տարեկանից՝ մոր աջակցությամբ, քանի որ մորական կողմից ժառանգել էր նաեւ երաժշտական գեներ: Նվագելիս երաժշտությանը «ձայնակցելու» սովորությունը նրա հետ մնաց ողջ կյանքի ընթացքում. երբ լսում եք Գուլդի՝ Բախ նվագելու նրա ուշ շրջանի ձայնագրությունները, կարող եք լսել, թե ինչպես է նա «ձայնակցում» երաժշտությանը:

Դեռեւս պատանի տարիքում ապագա վունդերկինդը մոր օգնությամբ 11 տարեկանում ընդունվեց Տորոնտոյի թագավորական կոնսերվատորիա, որտեղ սովորում էր երգեհոն եւ դաշնամուր: Նրա ուսուցիչները՝ Ֆրեդերիկա Սիլվեստրին եւ Ալբերտո Հերրերոն, մեծ ուշադրություն էին դարձնում մատների նուրբ բարձիկներին, նոտաների շիտակությանն ու տեխնիկայի հստակությանը: Գուլդը սովորեց եւս մեկ հմտություն. դաշնամուրի առջեւ՝ նստարանին, նստել շատ ցածր, ինչը նրան թույլ էր տալիս առավել ճշգրիտ նվագել, ազդում էր դաշնամուրի ստեղների ու հնչող յուրաքանչյուր նոտայի վրա:

Երիտասարդ տարիքում Գուլդը սկսեց ձայնագրություններ անել՝ առաջին հաջողությունը ստանալով 1955-ին՝ Բախի «Գոլդբերգի վարիացիաներով», ինչը նորարար կատարում էր:

Գլեն Գուլդի կատարողականությունը եզակի էր. նա կարող էր միաժամանակ նվագել երեք անկախ մեղեդի, այնպես, որ յուրաքանչյուր նոտա հստակ ու լսելի մնար: Նա յուրօրինակ վերաբերմունք ուներ «անլսելիի» հանդեպ՝ ուշադրություն դարձնելով դադարներին, որոնք ինքնին դառնում էին երաժշտության մասը: Գուլդը ձախլիկ էր, ուստի ձախ ձեռքի համար գրված երկրորդական մասերը նրա համար ավելի հեշտ էին, քան մյուս դաշնակահարների համար: Բեթհովենի երրորդ դո մինոր կոնցերտում նրա յուրօրինակ մոտեցումը փոխում է ամբողջ երաժշտական հյուսվածքը՝ ներկայացնելով Բեթհովենին ավելի «մարդկային ու կենդանի»:

Գուլդը հաճախ էր ելույթներ տալիս միայն ինքնուրույն կամ ձայնագրությունների միջոցով՝ խուսափելով զանգվածային լսարանի հետ շփումներից: 1964-ին նա ընդհատեց համերգային գործունեությունը՝ ամբողջովին նվիրվելով ստուդիայի ձայնագրություններին, որտեղ մշտապես կատարելագործում էր իր կատարողականությունը: Նրա հայտնի ձայնագրություններից են Բախի «Ֆուգայի արվեստը» եւ «Գոլդբերգի վարիացիաների» տարբերակները:

Գուլդի երաժշտության մեջ գերակշռում է ներդաշնակությունը եւ սերը երաժշտության նկատմամբ: Նա փորձում էր ներկայացնել բարոկկոյի աշխարհը՝ որպես մաքուր, ստեղծագործական ու համաչափ համակարգ, որտեղ յուրաքանչյուր նոտա եւ դադար ունենում են իրենց կարեւորությունն ու հստակությունը: Երաժշտագետները համարում են, որ նրա՝ Բախի կատարումները, օրինակ, ցուցադրում են երաժշտության լուռ ու հնչեղ մակարդակների ներդաշնակությունը եւ շարունակում են մնալ անգնահատելի արժեք ինչպես երկրի վրա, այնպես էլ հեռավոր տիեզերքում՝ 1977-ի «Վոյաջեր»-ների սկավառակների միջոցով:

Գլեն Գուլդը մահացել է 1982-ին՝ իր կյանքի 50-րդ տարեդարձից երկու օր անց՝ թողնելով երաժշտության պատմության մեջ անմոռանալի հետք: Նրա գերեզմանի վրա փորագրված են «Գոլդբերգի վարիացիաների» առաջին տեքստերը:

Անպայման լսեք Գլեն Գուլդի կատարումները, եւ դուք կզգաք, թե ինչպես է նրա նվագը արձագանք գտնում մարդկային հոգու խոր շերտերում՝ հիշեցնելով մեզ կյանքի ամենակարեւոր բաների մասին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐՎԵՍՏ ԵՎ ԺԱՄԱՆՑ

ՄԱՀԱՑԵԼ Է ԿԼԱՈՒԴԻԱ ԿԱՐԴԻՆԱԼԵՆ

Կյանքից հեռացել է Անրի Վեռնոյի «Մայրիկ» ֆիլմի մայրիկին մարմնավորած Կլաուդիա Կարդինալեն:

Աշխարհահռչակ իտալուհին 87 տարեկանում է մահացել, Փարիզի մոտ գտնվող Նեմուր քաղաքի իր տանը:

2010 թվականին համաշխարհային լեգենդը «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնին մասնակցելու համար Հայաստան էր եկել: Փառատոնն այդ տարի նվիրված էր Հայոց ցեղասպանության 95 եւ Անրի Վեռնոյի 90-ամյակներին:

Կլաուդիա Կարդինալեին նկարահանել են աշխարհահռչակ ռեժիսորներ՝ Ֆեդերիկո Ֆելինին, Լուկիո Վիսկոնտին: Նկարահանվել է «Վարդագույն հովազ», «Կրկեսի աշխարհ» եւ այլ ֆիլմերում:

ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԱԿԱԴԵՄԻԱՆ 80 ՏԱՐԵԿԱՆ Է

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիան (ՀԳՊԱ) այս տարի նշում է իր հիմնադրման 80-րդ հոբելյանը:

Ակադեմիան սեպտեմբերի 24-ին՝ ժամը 17:00-ին, Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում 2024-2025 թթ. ուստարվա շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությամբ մեկնարկել է 80-ամյակին նվիրված միջոցառումները:

Միջոցառումը ներառել է ՀԳՊԱ գործունեությանը նվիրված անիմացիոն տեսահոլովակի շնորհանդես, ողջույնի խոսքերով հանդես եկան ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը եւ ՀԳՊԱ ռեկտոր Վարդան Ազատյանը: Տոնական ծրագրի ընթացքում ներկայացվեց ՀԳՊԱ «Բարեկամների միությունը», որը նպատակ ուներ ամրապնդելու համագործակցությունը կրթական, մշակութային եւ հասարակական կառույցների հետ: Ավելի քան 200 ուսանողների հանձնվեցին դիպլոմներ մշակույթի եւ արվեստի ոլորտի հատուկ հյուրերի ուղեկցությամբ:

Միջոցառման ընթացքում Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիան եւ «Հոսք» հիմնադրամը ստորագրեցին համագործակցության հուշագիր, որի նպատակն էր միավորել կրթությունը, արվեստը, նորարարությունն ու փորձարարական ստեղծագործական պրոցեսները:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀՖԿՍՊԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՄԵԴԱԼԱԿԻՐՆԵՐ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի (ՀՖԿՍՊԻ) ուսանողները դարձել են Երեւանում անցկացված 2025 թվականի Եվրոպայի համալսարանների շախմատի առաջնության ոսկե մեդալակիրներ՝ թե՛ տղաների, եւ թե՛ աղջիկների մրցապայքարում:

ՀՖԿՍՊԻ-ի տղաների թիմի կազմում առաջնությանը մասնակցել են Շանթ Սարգսյանը եւ Մամիկոն Ղարիբյանը, իսկ աղջիկների թիմում՝ Մարիամ Ավետիսյանը եւ Մարիամ Խաչատրյանը: Թիմի մարզիչը մարմնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի եւ շախմատի ամբիոնի դոցենտ Երվանդ Հակոբյանն էր:

Գերատեսչության տվյալներով՝ առաջնությանը մասնակցել է 17 երկրի 32 համալսարանի 40 թիմ: Հայաստան է ժամանել շուրջ 120 պատվիրակ: Առաջնությունը կազմակերպվել է Եվրոպական համալսարանական սպորտի ասոցիացիայի (EUSA), Հայաստանի ուսանողական մարզական ֆեդերացիայի եւ ՀՊՏՀ նախաձեռնությամբ, մասնագիտական աջակցություն է ցուցաբերել Հայաստանի շախմատի ակադեմիան:

«ՈՍԿԵ ԳՆԴԱԿ»

Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում կայացավ հեղինակավոր «Franďe Football»-ի «Ոսկե գնդակ»-ի պաշտոնական մրցանակաբաշխությունը:

«Շատլե» թատրոնում կայացած մրցանակաբաշխության ժամանակ մինչեւ 21 տարեկան լավագույն ֆուտբոլիստի մրցանակին՝ Kopa Trophy-ին արժանացան «Բարսելոնա»-ի ֆուտբոլիստները՝ տղամարդկանց թիմի անդամ Յամին Յամալն ու կանանց թիմի խաղացող Վիկի Լոպեսը:

Տարվա լավագույն մարզիչը տղամարդկանց ֆուտբոլում ՊՍԺ-ի գլխավոր մարզիչ Լուիս Էնրիկեն է, իսկ կանանց ֆուտբոլում՝ Անգլիայի կանանց ֆուտբոլի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Սարինա Վիգմանը:

Լավագույն տղամարդ դարպասապահ ճանաչվեց «Մանչեսթեր Սիթի»-ի խաղացող Ջանլուիջի Դոնարումման, որը նախորդ մրցաշրջանն անցկացրել է ՊՍԺ-ի կազմում, իսկ կանանց ֆուտբոլի լավագույն դարպասապահի մրցանակին արժանացավ «Չելսի»-ից Հանա Հեմփթոնը:

Անցած մրցաշրջանի լավագույն թիմերն են «Արսենալ»-ի կանանց թիմն ու ՊՍԺ-ի տղամարդկանց թիմը:

Կանանց ֆուտբոլի «Ոսկե գնդակ»-ին այս անգամ արժանացավ Իսպանիայի հավաքականի եւ «Բարսելոնա»-ի խաղացող Այտանա Բոնմատին, որն այս մրցանակին արժանանում է երրորդ տարին անընդմեջ:

Տղամարդկանց ֆուտբոլի «Ոսկե գնդակ»-ը նվաճեց ՊՍԺ-ի հարձակվող Ուսման Դեմբելեն:

Ներկաները նաեւ հարգանքի տուրք մատուցեցին կյանքից անժամանակ հեռացած Պորտուգալիայի ազգային թիմի ֆուտբոլիստ, «Լիվերպուլ»-ի հարձակվող Դիոգու Ժոտայի եւ «Մանչեսթեր Յունայթեդ»-ի նախկին հարձակվող Դենիս Լոուի հիշատակին:

● *Հոկտեմբերի 4-ին՝ 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Սերը տարիք չի հարցնում» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000, 4.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Անչափահասին կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձին կենսաթոշակ նշանակելու համար ո՞վ պետք է դիմի կենսաթոշակ նշանակող մարմին:

Իսկուհի Հայրապետյան (47 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ մինչեւ 14 տարեկան անչափահաս անձին կենսաթոշակ նշանակելու համար նրա հաշվառման վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում գրավոր դիմում է ներկայացնում ծնողը (որդեգրողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն): Եթե անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձի օրինական ներկայացուցիչը համապատասխան կազմակերպությունն է (մանկատունը կամ հոգեբուժարանը), որտեղ գտնվում է անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձը, նրան կենսաթոշակ նշանակելու համար գրավոր դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կազմակերպության գտնվելու վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում է ներկայացնում այդ կազմակերպության ղեկավարը կամ նրա լիազորած անձը: 14 տարեկան անձն իրավունք ունի կենսաթոշակ նշանակելու համար դիմել անձամբ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումում նա լրացնում է աշխատակցի տրամադրած դիմումի ձեւը, որից հետո նրան է վերադարձվում դիմումի ծանուցումը, որտեղ նշվում է դիմումի գրանցման համարը, ընդունման ամսաթիվը, ընդունող աշխատակցի ազգանունը, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու ժամկետը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է որոշվում երեխայի նկատմամբ հայրությունը:

Լիանա Աթաբեկյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայրության ճանաչման պետական գրանցման հիմքերն են՝

1) երեխայի ծննդյան պահին ամուսնության մեջ չգտնվող մոր եւ երեխայի նկատմամբ իրեն հայր ճանաչող անձի համատեղ հայտարարությունն առ այն, որ երեխան սերվել է հայտարարություն ներկայացնող անձից,

2) ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում մոր հետ ամուսնության մեջ չգտնվող՝ երեխայի նկատմամբ իրեն հայր ճանաչող անձի հայտարարությունն առ այն, որ երեխան սերվել է իրենից,

3) «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտը կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած համապատասխան վճիռը:

Եթե երեխայի ծնունդը գրանցել է օտարերկրյա պետությունը, ապա հայրության ճանաչման պետական գրանցումը կարող է կատարվել Հայաստանի Հանրապետությունում, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Օտարերկրյա պետության գրանցած ծննդյան ակտային գրանցման հիման վրա կատարված հայրության ճանաչման պետական գրանցման դեպքում դիմողին տրամադրվում է հայրության ճանաչման վկայական, եւ կատարված հայրության ճանաչման պետական գրանցման մասին հաղորդվում է երեխայի ծննդի ակտային գրանցման վայր՝ ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված կարգով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հիշեցում բոլորի համար:

Բնությունը պաշտպանում է մեզ, մենք էլ պարտավոր ենք նրան պաշտպանել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 2 + 6 +16 + 20
Կոտայքի լեռներ	+ 2 + 4 +17 + 21
Կոտայքի նախալեռներ	+ 6 + 9 +20 + 23
Գեղարքունիք	+ 1 + 5 +16 + 19
Լոռի	+ 2 + 6 +16 + 19
Տավուշ	+ 4 + 12 +21 + 24
Արագածոտնի լեռներ	+ 2 + 4 +17 + 19
Արագածոտնի նախալեռներ	+ 5 + 10 +21 + 24

Արարատ	+7 + 11 +22 + 26
Արմավիր	+ 6 + 10 +22 + 26
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 +17 + 19
Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 11 +21 + 25
Սյունիքի հովիտներ	+ 9 + 13 +22 + 26
Սյունիքի նախալեռներ	+ 5 + 8 +18 + 21
ԼՂՀ	+ 9 + 12 +22 + 25
Երեւան	+11 + 13 +19 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **24.9.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ
չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային
հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը
պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս
կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել
հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ
«Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*